Նախ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 1392-Ա/ձ «26» օգոստոսի 2021 թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳԱՎԱԹ» ՍԻՐՈՂԱԿԱՆ ԽՃՈՒՂԱՅԻՆ ՀԵԾԱՆՎԱՎԱԶՔԻ ՄՐՑԱՇԱՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ, ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի «ա» և «գ» կետերի՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝

1) «Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» սիրողական խճուղային հեծանվավազքի մրցաշարի կանոնակարգը՝ համաձայն № 1 հավելվածի,

2) «Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» սիրողական խճուղային հեծանվավազքի մրցաշարի նախահաշիվը՝ համաձայն № 2 հավելվածի,

3) «Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» սիրողական խճուղային հեծանվավազքի մրցաշարի մասնակցության հայտը՝ համաձայն № 3:

Նախարար՝ ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

8/26/2021

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211

Հավելված № 1
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2021 թվականի Օգոստոսի 26 *-ի*
№ 1392 *-Ա/2 հրամանի.*

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» սիրողական խճուղային հեծանվավազքի մրցաշար

I. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. 2021 թվականին անցկացվող սիրողական խճուղային հեծանվավազքի մրցաշարի (այսուհետ՝ Մրցաշար) նպատակն է՝

1) Հանրապետությունում հեծանվային սպորտի և առողջ ապրելակերպի մասսայականացում,

2) բնակչության շրջանում ֆիզկուլտուրայի և սպորտի քարոզչության ապահովում.

3) հեծանվային սպորտի դերի բարձրացում, «Հեծանիվը որպես շրջակա միջավայրը աղտոտվածությունից զերծ պահելու միջոց» գաղափարի քարոզում:

2. Խնդիրներն են՝

1) բնակչության ոչ բավարար ներգրավվածությունը հեծանվային սպորտի պարապմունքներին և առողջ ապրելակերպի ոչ բավարար քարոզչությունը,

2) բնակչության զանգվածային մարզական միջոցառումներին հետագա մասնակցության ապահովումը:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

3. Մրցաշարի նախապատրաստման և անցկացման աշխատանքները համակարգում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն):

4. Մրցաշարի կազմակերպումն ու անցկացումը իրականացվում է Նախարարության կողմից հաստատված հանձնաժողովի և մրցավարական հանձնաժողովի կողմից՝ համագործակցելով համապատասխան ֆեդերացիաների և հեծանվային սպորտի մանկապատանեկան օլիմպիական մարզադպրոցի հետ:

III. ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՎԱՅՐԸ

5. Մրցաշարն անցկացվում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում՝ (Շորժա-Սևանա լճի թերակղզի ճանապարհահատված) 2021 թվականի սեպտեմբերի 19-ին:

6. Մեկնարկը՝ Շորժա համայնքից՝ ժամը 13:00-ից. մասնակիցները պետք է մրցավայր ներկայանան մրցումներից մեկ ժամ առաջ, անձը հաստատող փաստաթղթերով և բժշկի համապատասխան թույլտվությամբ:

IV. ՄՐՑԱՇԱՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ, ԾՐԱԳԻՐԸ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

7. Մրցաշարին կարող են մասնակցել ցանկություն ունեցող այն անձինք, ովքեր ունեն բժշկի համապատասխան թույլտվություն մրցաշարին մասնակցելու համար:

8. Մրցաշարին չեն կարող մասնակցել այն անձինք, ոքեր վերջին 3 տարիների ընթացքում մասնակցել են հեծանվային սպորտի ՀՀ և միջազգային առաջնություններին:

9. Մասնակիցները պետք է մրցավայր ներկայանան իրենց անձնական հեծանիվներով և սաղավարտներով, բացառվում է սպորտային-մրցակցական, էլեկտրական կամ մոտոռային հեծանիվներով մասնակցությունը:

10. Մրցաշարը կանցկացվի երկու տարիքային խմբով՝

1) առաջին տարիքային խումբ՝ 18-ից 35 տարեկան կանայք, 18-ից 40 տարեկան տղամարդիկ,
2) երկրորդ տարիքային խումբ՝ 36 և բարձր տարիքի կանայք, 41 և բարձր տարիքի տղամարդիկ:

11. Մրցաշարը նախատեսված է անցկացնել մեկ փուլով՝ Շորժայից դեպի Սևանի թերակղզի (տարածքը՝ 40 կմ):

12. Մրցաշարի անցկացման կարգն ու պայմանները որոշում է Նախարարության կողմից ստեղծված մրցավարական հանձնաժողովը:

13. Պահանջվող պայմաններին չհամապատասխանող մասնակիցների մասնակցությունը Մրցաշարին չի թույլատրվելու:

V. ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

14. Մրցաշարին երկու տարիքային խմբերում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված մասնակիցները (տղամարդիկ և կանայք) պարգևատրվում են Նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով, գավաթներով, մեդալներով, իսկ 1-ից 20-րդ տեղեր գրաված մասնակիցները՝ դրամական մրցանակներով:

15. Մրցաշարին բոլոր մասնակիցներին տրվում են մարզաշապիկներ և հավաստագրեր: Արդյունքներն ամփոփվում են մրցումների ավարտից անմիջապես հետո:

VI. ԾԱԽՍԵՐԸ

16. Մրցաշարի անցկացման հետ կապված ծախսերը՝ մրցումների անցկացման համար մասնակիցներին, մրցավարներին և կամավորներին սնունդ, ճանապարհածախս, ռադիոհանգույցի վարձակալում, մարզահագուստ (մարզաշապիկ, գլխարկ), գավաթներ, մեդալներ, հավաստագրեր, շնորհակալագրեր, դրամական մրցանակներ երկու տարիքային խմբերի 1-ից 20-րդ տեղեր գրաված մասնակիցներին՝ 1-ին տեղ՝ 1.000.000 ՀՀ դրամ, 2-րդ տեղ՝ 600.000 ՀՀ դրամ, 3-րդ տեղ՝ 400.000 ՀՀ դրամ, 4-րդ տեղ՝ 150.000 ՀՀ դրամ, 5-րդ տեղ՝ 100.000 ՀՀ դրամ, 6-10-րդ տեղերը՝ 75.000 ՀՀ դրամ, 11-20-րդ տեղերը՝ 50.000 ՀՀ դրամ, հարկերը, տուրքերը և պարտադիր վճարները ներառված չեն, հուշանվերներ՝ պատվավոր հյուրերին, հաղորդավարի ծառայություն, գովազդային նյութերի

պատրաստման, նկարահանման, մրցավայրի ձևավորման, տարբեր տեսակի տրանսպորտային միջոցների, գրենական պիտույքների ծախսերը կատարվում է ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին

VII. ՀԱՅՏԵՐԸ

17. Մրցաշարին մասնակցության համար ներկայացվում է հայտ՝ համաձայն հավելված 2-ի, անձնագրի կամ նույնականացման վկայականի և մրցաշարին մասնակցելու համար բժշկի թույլտվության պատճենները: Փաստաթղթերը ներկայացնել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության սպորտի քաղաքականության վարչություն մինչև 2021 թվականի սեպտեմբերի 10-ը ներառյալ (էլ. հասցե՝ **s.prazyan@gmail.com**): Հարցերի դեպքում զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ **(010) 59-96-33, (010) 59-96-32, (094) 80-09-77, մասնագիտական հարցերի դեպքում զանգահարել (077) 85-81-08** երկուշաբթի-ուրբաթ օրերին՝ ժամը 9:00-18:00:

Հավելված № 3
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2021 թվականի հոկտեմբերի *26* *-ի*
№ 1392 *-Ա/2 հրամանի*

«Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» սիրողական խճուղային հեծանվավազքի մրցաշարի հայտի օրինակելի ձև

№	Ազգանուն, անուն, հայրանուն	Ծննդյան թիվը	Անձնագիր (սերիա, համար)	Բնակության վայրը, հասցեն	Հեռախոսի համար	էլ. հասցե
1.						